1926 թ. վերջերը՝ ան վերջնականապէս հրաժեշտ տալով ուսուցչական ասպարէզին, ամբողջութեամբ կը նուիրուի իր սիրած արուեստին:

1927 թ.՝ Գահիրէի մէջ, նկարիչ Առաքել Պատրիկի հետ միասնաբար, կը կազմակերպէ իր առաջին ցուցահանդէսը՝ գերազանցապէս բաղկացած երգիծադիմանկարներէ, արժանանալով արուեստի քննադատներուն անվերապահ գնահատանքին:

Նոյն տարին՝ ընդառաջելով անուանի լրագրող Մուհամէտ Թապէյի առաջարկին, ան՝ որպէս քաղաքական երգիծանկարիչ, մաս կը կազմէ անոր խմբագրած «Ռոզ Էլ Եուսէֆ» շաբաթաթերթի անձնակազմին՝ այդպէսով սկզբնաւորելով իր անխափան գործակցութիւնը Եգիպտոսի արաբական մամուլին: Առընդմիշտ Եգիպտոս հաստատուելով՝ Սարուխան իր կեանքն ու գործունէութիւնը կը կապէր անոր ճակատագրին հետ:

Օժտուած դիտողականութեան հազուագիւտ նրբութեամբ եւ խոր թափանցումի արտասովոր զգացողութեամբ, հարազատօրէն ընկալելով հիւրընկալ ժողովուրդի ընկերային բարքերը, եւ խորապէս իւրացնելով անոր հասարակական եւ քաղաքական կեանքին ամբողջ ստեղնաշարը, ան՝ իր արուեստի հզօր ուժով, շուտով կը դառնայ Եգիպտոսի ազատագրական շարժումին յառաջապահներէն մէկը, իրեն ապահովելով բարձր վարկ մը՝ ոչ միայն եգիպտական, այլեւ ամբողջ արաբական մամուլի աշխարհէն ներս:

Քաղաքական բախտորոշ իրադարձութիւններու եւ ազատագրական պայքարի այդ փոթորկոտ տարիներուն՝ ան կը յղանայ եւ ստեղծագործօրէն կ'իրագործէ ուշիմ, ողջամիտ եւ միաժամանակ սրամիտ եգիպտացիի տիպարը՝ «Էլ Մասրի Էֆֆէնտի»-ն, որ կը մարմնաւորէր ժողովուրդին հանրային կարծիքը, անոր խղճմտանքին ձայնը՝ երկրին տնտեսական, քաղաքական եւ հասարակական կեանքի բոլոր հարցերուն նկատմամբ:

Այդ տարիներուն, ան իր մասնակցութիւնը կը բերէ «Սալոն տիւ Քէռ»-ի հաւաքական ցուցահանդէսներուն (1926, 1927 եւ 1928 թթ.) եւ Պուքրէշի մէջ կազմակերպուած «Հայ Արուեստի Ցուցահանդէս»-ին (1931 թ.):

Ան հետզհետէ իր աջակցութիւնը կը բերէ նաեւ արաբական բազմաթիւ պարբերաթերթերու:

1934 թ. երբ Մուհամէտ Թապէյ կը հեռանայ «Ռոզ Էլ Եուսէֆ»-էն եւ կը հիմնէ իր սեփական շաբաթաթերթը՝ «Ախբր Սաա», Սարուխան նոյն պաշտօնով կը հետեւի անոր:

1937 թ., ան կը կազմակերպէ իր երրորդ անհատական ցուցահանդէսը, ուր ներկայացուած էին եգիպտացի եւ օտար պետական անձնաւորութիւններու երգիծադիմանկարները:

Տարիներու հոլովոյթին հետ՝ Սարուխան իր ծիծաղը կը բաշխէ նաեւ Եգիպտոսի մէջ լոյս տեսնող ֆրանսատառ եւ անգլիատառ բազմաթիւ թերթերու:

Անոր երգիծանկարները հարազատ ցոլացումը հանդիսանալով արաբական հանրային կարծիքին, անոնք կ'արտատպուին եւրոպական եւ ամերիկեան պարբերաթերթերէն:

1939 թ. սկսեալ, չորս տարի անընդհատաբար, Մեթր Երուանդ Սիմոնեանի հետ լոյս կ'ընծայէ՝ քաղաքական, ընկերային եւ երգիծական ֆրանսատառ «Լա Քարաւան» ֆրանսատառ շաբաթաթերթը: Կ'իրագործէ նոր տիպար մը՝ «Ալ Խաուակա Էֆֆէնտի»-ն, որպէս զրուցակից «Էլ Մասրի Էֆֆէնտի»-ին:

1939 թ.՝ «Լա Պուրս Էժիփսիէն» ֆրանսատառ օրաթերթը, հրապարակ կը հանէր իր մեծահռչակ աշխատակիցին քաղաքական երգիծանարներէն բաղկացած ալպոմ մը՝ «1938 Քաղաքական

Տարին» խորագիրին տակ, որոնք լոյս տեսած էին նոյն թերթին կիրակնօրեայ համարներուն մէջ: Այդ երգիծանկարները ուղուած էին առաւելաբար խաղաղութեան թշնամիներուն դէմ, դատապարտելով յատկապէս կայսերապաշտ պետութիւններու նուաճողական ձգտումները:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի դժնդակ տարիներուն, Սարուխան՝ ստեղծագործական նոր թափով, իր իւրայատուկ պայքարը կը մղէ պատերազմի հրձիգներուն դէմ, իր հատու ու անողոք գրիչով ծաղրի ենթարկելով «Առանցք»-ի միապետներուն եւ անոնց արբանեակներուն արկածախնդրական գործունէութիւնը, միաժամանակ ցոյց տալով աւերումի ու սպանումի դժոխային պատկերներն ու ողբերգութիւնը, նպատակ ունենալով աւելի ամրապնդել ժողովուրդներու դիմադրականութեան ու պայքարի ոգին: Արդարեւ «լաւատեսութեամբ մը, որ կը հասնէր մարգարէութեան», ան հաստատ համոզում ունէր վերջնական յաղթանակին նկատմամբ:

Ներքին ճակատին վրայ եւս՝ պայքարելու համար անկումային տրամադրութիւններու եւ չարանենգ գաղափարներու դէմ, ան կ'իրագործէ «Իշաս Հանըմ» («Տիկին Անհիմ Զրոյց») եւ «Էլ Մախտուտ Էֆֆէնտի» («Պարոն Պարտուողական») երգիծանկարային զոյգ տիպարները:

1942 թ., Սարուխան հրաւէր կը ստանայ իր աշխատակցութիւնը բերելու դաշնակից բանակներու «Պատերազմական Լրատու Գրրասենեակ»-ի տնօրէնութեան կողմէ:

Պատերազմի աւարտին, ան՝ մանուլին մէջ հրապարակած 1500-է աւելի երգիծանկարներէն հատընտիր մը, լոյս կ'ընծայէր առանձին ալպոմով մը՝ «Այս Պատերազմը» (Գահիրէ) խորագրին տակ, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով: Այդ ժողովածուն կը հանդիսանայ Բ. Պատերազմի պատկերաւոր եւ վաւերագրական համառօտ պատմութիւնը:

1946 թ. երբ «Ախբր Սաա» թերթը կը միակցուէր «Ախպար Էլ Եոմ» շաբաթաթերթին, Սարուխան՝ մինչեւ կեանքի վախճանը, իր մնայուն աշխատակցութիւնը կը բերէ անոր եւ նոյն հրատարակչատունէն լոյս տեսնող «Ալ Ախպար» եւ այլ թերթերու:

1952 թ. ամրան, ան կու տայ Գահիրէի իր չորրորդ եւ վերջին անհատական ցուցահանդէսը՝ «Լաւատեսութեան Դիտակ» պիտակին տակ, ներկայացնելով առաւելաբար ընկերային կեանքէ առնուած երգիծանկարներ:

1952 թ. Յուլիս 23-ի Յեղափոխութեամբ եւ հանրապետութեան հաստատումով Եգիպտոսի մէջ, Սարուխան՝ սիրտը հրճուանքով զեղում, կը դառնայ նոր վերածնունդի շեփորահարը, իր հզօր տաղանդը ի սպաս դնելով երկրի վերականգնումի աշխատանքներուն եւ արաբական դատի պաշտպանութեան: Ան՝ իր անվեհեր գրիչով, անխնայ կը մտրակէ ժողովուրդի թշնամիները եւ կը դիմակազերծէ կայսերապաշտ պետութիւններու դիւանագիտական ոտնձգութիւններն ու սադրանքները: Նոր կարգերու հաստատումով՝ ան կը յղանայ բարի, վեհանձն, աշխատասէր ու անզիջող հայրենասէրի օրինակելի տիպարը՝ «Ալ Արաբ Էֆֆէնտի»-ն:

1955 թ.՝ Պէյրութի եւ Հալէպի մէջ Սարուխանի կազմակերպած ցուցահանդէսները ալ աւելի կ'ամրապնդեն անոր ունեցած համբաւը Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներուն մօտ:

1960 թ. ի շարս միջազգային տասնչորս երգիծանկարիչներու, ան՝ ամերիկեան «Ժողովուրդէ Ժողովուրդ» երգիծանկարիչներու յանձնաժողովին կողմէ կը պարգեւատրուի «Երգիծանկարներ խաղաղութեան համար» շքանշանով, ի վարձատրութիւն խաղաղութեան ի նպաստ իր կատարած ստեղծագործական աշխատանքներուն համար:

1964 թ. Ապրիլ 5-ին, նախաձեռնութեամբ Հելիոպոլսոյ «Հ.Ա.Հ. Կոկանեան Սրահ»-ի, Գահիրէի «Հ.Գ.Մ.»-ի, Աղեքսանդրիոյ «Տիգրան Երկաթ Մշակութային Միութիւն»-ի եւ սերտ գործակցութեամբ Ա.Մ.Հ.-ի լրագրողներու սենտիքային՝ արժանաւորապէս կը նշուէր Սարուխանի ստեղծագործական հասարակական գործունէութեան 40-ամեայ յոբելեանը, հովանաւորութեամբ Ա.Մ.Հ.-ի Մշակոյթի եւ Ազգային Ուղղութեան նախարար՝ տոքթ. Ապտէլ Քատէր Հաթէմի:

Այդ հանդիսութեան խօսք կ'առնեն հայ եւ արաբ անձնաւորութիւններ, որոնք բոլորն ալ վեր կ'առնեն յոբելեար արուէստագէտին կատարած անփոխարինելի դերը Եգիպտոսի քաղաքական երգիծանկարչութեան ծագումի եւ զարգացումի պատմութեան մէջ, միաժամանակ ընդգծելով անոր միտքի ու սիրտի բարեմասնութիւնները, որ որպէս հայ մարդ եւ եգիպտացի քաղաքացի՝ հաւասարազօր ուժգնութեամբ, պայքարած է զոյգ ճակատներու վրայ՝ պաշտպանելու համար ազատութեան եւ արդարութեան սկզբունքները: Անոր երկարամեայ գործակից՝ եգիպտացի մեծանուն լրագրող Մուսթաֆա Ամին, յատկանշական հետեւեալ արտայայտութիւններով կ'եզրափակէր իր ելոյթը. «Սարուխան շատ կը սիրէ Եգիպտոսը: Ինչ որ սակայն ամէնէն աւելի սիրած եմ իր մօտ՝ այն է թէ ինք երբեք չի մոռնար իր հայ ըլլալը, եւ թէ իր գոյութեան նպատակ ըրած է երջանկացնել հայ ժողովուրդը»:

Այս յոբելեանը, որոշ ուշացումով, արձագանգ կը գտնէր նաեւ

սփիւռքի բազմաթիւ գաղթօճախներու եւ մայր հայրենիքի մէջ:

1967 թ. Մարտ 4-ին, Պէյրութի մէջ, նախաձեռնութեամբ «Թէքէեան Մշակութային Միութիւն»-ի՝ մեծարանքի հրապարակային հանդիսութեամբ մը, կը նշուէր Սարուխանի ստեղծագործական վաստակին 45-ամեակը, յոբելեարին ներկայութեամբ:

1968 թ. ամրան, ընդառաջելով Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Նախագահութեան հրաւէրին, տարիներու վաստակով բեղմնաւոր եւ սիրտը կարօտով լեցուն, Սարուխան կը մեկնէր մայր հայրենիք, ուր կ'արժանանար ժողովուրդին եւ մամուլին ջերմ վերաբերումին: Անոր տուած ցուցահանդէսները Երեւանի, Լենինականի եւ Կիրովականի մէջ կ'արձանագրեն արտակարգ յաջողութիւն, նշանակէտը դառնալով արուեստի քննադատներուն անկաշառ գնահատականներուն: Հայրենասէր արուեստագէտը՝ իր ցուցադրած երգիծանկարները ամբողջութեամբ կը նուիրէ Երեւանի Պետական Պատկերասրահին:

1973 թ. Մոնթրէալի Միջազգային Ցուցահանդէսի «Մարդոց Երկիրը» յանձնաժողովին կողմէ, ան հրաւէր կը ստանայ իր գործերը ցուցադրելու «Երգիծանքի Տաղաւար»-ին մէջ: Ցուցահանդէսը կ'արժանանայ այցելուներուն անկարագրելի ընդունելութեան: Այս առթիւ Սարուխանի կը շնորհուի «Երգիծանկարիչներու Նահապետ» նախանձելի կոչումը՝ իր ասպարէզէն ներս ունեցած աւելի քան կիսադարեան ստեղծագործական վաստակին համար: Անոր լուսանկարը կը զարդարէ «Երգիծանկարիչներուն Միջազգային 10-րդ Սալոն»-ի գաթալոկին ճակատը: Ան՝ նոյն յաջողութեամբ, սահմանափակ ցուցահանդէսներ կը կազմակերպի նաեւ Թորոնթոյի, Նիւ Եորքի, Պոսթընի, Տիթրոյթի եւ Փարիզի մէջ:

Վերադառնալով Եգիպտոս, ան՝ մշտանորոգ աշխուժով, կը շարունակէ իր ստեղծագործական եւ հասարակական անշեղ գործունէութիւնը:

Բովանդակալից կեանքի ընթացքին՝ արաբական լրագրական աշխարհին մէջ գրաւած պատուաբեր դիրքին առընթեր, Սարուխան իր թանկագին աջակցութեամբ սատարած է հայ մշակոյթի տարբեր երեսներուն՝ յատկապէս որպէս աննման երգիծանկարիչ ու զարդանկարիչ, փնտռուած հրապարակագիր եւ զուարթախոհ թատերագիր:

Հայկական գրաֆիկական արուեստի պատմութեան մէջ, գիրքի նըկարազարդումի փայլուն օրինակներ կը հանդիսանան Երուանդ Օտեանի եւ Յակոբ Պարոնեանի երգիծական վիպակներուն՝ Սարուխանի բարձրարուեստ նկարազարդումները:

«ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՋՈՒՆԻ Ի ԾԱՊԼԱՎԱՐ ԵՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ», (Գահիրէ, 1938 թ.).- Երուանդ Օտեանի այս գլուխ-գործոցը՝ որուն մէջ մտրակուած են դատարկաբան ու մակաբոյծ յեղափոխական գործիչները, Սարուխանի անձնադրոշմ նկարազարդումով ապրած է իր երկրորդ կեանքը: Ճիշտ ընկալելով պատմուածքին հիմնական բովանդակութիւնը, հեղինակին հոգեհարազատ մտայղացումը, Սարուխան կրցած է՝ գիծի օգնութեամբ, ստեղծել գրական երկին համապատասխան գեղարուեստական լիարժէք գործ մը, որ իր այժմէական շունչով՝ առաւել արժեւորած է երկին գաղափարական բովանդակութիւնը, միաժամանակ աւելցնելով գիրքին գեղագիտական արժէքը:

«ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ», (Գահիրէ, 1962 թ.).- Սոցիալ-քաղաքական աննման երգիծագիր՝ Յակոբ Պարոնեանի այս վիպակը, որուն մէջ պոլսական միջավայրն ու քաղքենի բարքերը տրուած են հիանալի հարազատութեամբ, Սարուխան՝ իր սրամիտ ու կախարդական վրձինով կրցած է զայն վերստին կեանքի կանչել, վերընծայելով կենդանի եւ ներգործող տիպարներ:

«ՏԵ'Ս ԽՕՍՔԵՐԴ», (Գահիրէ, 1962 թ.).- Կատակային բնոյթի երգիծանկարներու այս ալպոմին մէջ, հեղինակը՝ հնարագէտ գըրչանկարներով, կը ներկայացնէ հայերէն լեզուի պատկերաւոր իրականութիւնները խտացնող ընթացիկ ասացուածքներու ամբողջ շարք մը:

«ՄԵՆՔ՝ ՄԵՐ ԱԿՆՈՑՈՎ», (Գահիրէ, 1962 թ.).- Սփիւռքահայ կենցաղային թեմաներով երգիծանկարուած այս հատորին մէջ, խորաթաբանց արուեստագէտը՝ խօսքի եւ գրիչի ներդաշնակ զինակցութեամբ մը, կը քննադատէ սփիւռքահայութեան կենցաղին մէջ արմատացած անառողջ ու խորթ բարքերը՝ որոնք կը դիմափոխեն ազգային ապրելաձեւի լաւագոյն աւանդները, սպաննելով հայ մարդուն ազգապահպանման դիմադրողական եռանդը. այս բոլորը՝ տրուած թելադրական ու դաստիարակչական ոգիով: Որովհետեւ՝ եթէ Սարուխան գիտէ երգիծանքի իր քաւդիչ գլանին տակ առնել թերին, ան՝ ապագային հանդէպ միշտ լաւատեսութեամբ լեցուն, գիտէ նաեւ քաջալերել օրինակելին, իր ճարտար գրիչով հայօրէն ապրելու ու գործելու ճանապարհը ցոյց տալով ընթերցողին:

Սարուխան՝ որպէս գրչի մարդ, հայ լրագրական ասպարէզէն ներս տարած է գնահատելի աշխատանք, առաւելաբար աշխատակցելով Ռ.Ա.Կ.-ի մամուլին (Գահիրէի «Արեւ» օրաթերթ, 1925 թ. սկսեալ, Պէյրութի «Անի», «Շիրակ» պարբերաթերթեր, «Զարթօնք» օրաթերթ, Փարիզի «Զուարթնոց» պարբերաթերթ եւ Պոսթընի «Պայքար» տարեգիրք):

Անոր հրապարագրական տաղանդին արգասիքը կը հանդիսանայ «ՎԱՍՆ ԵՕԹՆ ՈՒ ԿԷՍԻՑ ԿԱՐԾԵՑԵԱԼ «ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ», (Պէյրութ, 1968 թ.), ժողովածուն որուն հրապարակագրական էջերը նախապէս լոյս տեսած են «Արեւ» օրաթերթին մէջ: Հեղինակը՝ գերազանցապէս խօսքի արտայայտութեան դիմելով, արտցաւ հայու անզուսպ պոռթկումով, օրը օրին արձանագրուած տպաւորութիւններու լոյսին տակ, փաստագրեալ հարուստ տուեալներով ու համոզիչ ընդհանրումներով, կու գայ ապացուցանել, որ սփիւռքահայ մարդուն մէջ արմատացած մարդկային անբաղձալի բազմաթիւ թերութիւններ, որոնք ծնունդ են իր ապրած ժամանակի անբարենպաստ պայմաններուն, եւ որոնք ան կը նկատէ իւրայատուկ «ազգային մեղքեր»՝ աւելի լայն համեմատութեամբ, «յաւելեալ ու ճոխացեալ» կը դրսեւորեն նաեւ «քաղաքակիրթ» կոչուած ուրիշ ժողովուրդներ:

Հրապարակագրութեան առընթեր՝ ան ճանչցուած էր նաեւ որպէս առիւքնող բանախօս մը:

Սարուխան իր համեստ ուժերը փորձած է նաեւ թատերգութեան մէջ՝ գրելով, ներկայացնելով եւ լոյս ընծայելով չորս «զաւեշտախաղեր» («ՄԵՆՔ ՀԱՅԵՐԷՆ ՉԵ՞ՆՔ ԳԻՏԵ՞Ր...», (Գահիրէ, 1963 թ.), «ԱՅՐԷ ԻՆՉ ՈՐ ՊԱՇՏԵՑԻՐ», «ՈՒՐԲԱԹ ԿԸ ՀԱՍՆԻՄ՝ ԹԱՂՈՒՄՍ ՊԱՏՐԱՍՏԵՑԷՔ...», (Գահիրէ, 1971 թ.), «ԵՍ ՔԵԶ ԳՈՎԵՄ, ԴՈՒՆ՝ ՉԻՍ», (Գահիրէ, 1974 թ.):

Սփիւռքահայ կեանքը յուզող երեւոյթներն են, որոնք անոր առջեւ բացած են թատերգութեան ուղին: Չաւեշտագիրը՝ խոնարհ աստիճանով մը, շարունակելով պարոնեանական աւանդները, առողջ ու շինարար երգիծանքի մը խորքին վրայ, սրտի մորմոքով կը պարզէ սփիւռքահայ մարդուն ներքին տրամաբանութեան, հայօրէն գոյատեւելու անոր առօրեայ պայքարը, խօսքի կենդանի ու կարկառուն պատկերներով՝ յատկապէս ձաղկելով անոր ընտանեկան համերաշխութիւնը խանգարող, ազգային դիմագիծը եղծանող կենցաղային օտարամուտ բարքերը:

Արուեստագէտին չափ մեծ էր Սարուխանի ինքնամատոյց ծառայութեան ոգին: Ամբողջ էութեամբ իմաստաւորուած իր հետապնդած առաքելութեան ճշմարտացիութեամբ, եւ զսպանակուած վերածընուած մայր հայրենիքի անչափելի սիրով, ան երբեք չխզեց իր կապը ժողովուրդին հետ, մասնակից դառնալով անոր ուրախութիւններուն ու վիշտերուն:

1942 թ. սկսեալ գործօն անդամ Ռ.Ա.Կ.-ի, օժտուած գաղափարական անշահախնդիր մարտնչողի գերազանց առաքինութիւններով, ան վայելեց անշահախնդիր ու անբասիր գործիչի նախանձելի համբաւը: Միաժամանակ հեղինակաւոր ղեկավարի իր դիրքերէն, ան գիտցաւ մղիչ ոյժ մը դառնալ ազգային կեանքէն ներս, ամէն առիթներով պաշտպան կանգնելով հայ ժողովուրդի նուիրականութիւններուն եւ անոր արդար պահանջներուն: Ան եղաւ ջատագովը համերաշխութեան՝ միացեալ ճիգերով կարենալ դիմագրաւելու համար սփիւռքահայ ճակատագրին վերապահուած անբաղձալի բոլոր հաւանական երեւոյթները:

Հայ մշակոյթի բոլորանուէր մշակը, իր ժամանակն ու կորովը անսակարկ ի սպաս դրաւ նաեւ ընկերային ու մարդասիրական բազմապիսի աշխատանքներու, ցուցաբերով անսպառ կենսունակութիւն ու նուիրուածութիւն: Արդարեւ անոր ջանքերուն շնորհիւ է, որ ծնունդ առած է Գահիրէի «Հայ Մշակոյթի Բարեկամներու Մարմին»-ը եւ Հելիոպոլսոյ «Այծեմնիկ Հանգստեան Տուն»-ը: Ան մաս կազմած է «Եգիպտահայ Ներգաղթողներու Կեդրոնական Յանձնախումբ»-ին եւ «Ազգային Խորհուրդ»-ին: Երկար տարիներ ատենապետի պաշտօններ վարած է «Հ.Բ.Ը.Մ.»-ի Գահիրէի մասնաճիւղի, «Հ.Գ.Մ.»-ի եւ «Հ.Ա.Հ. Կոկաեան Սրահ»-ի վարչութիւններէն ներս: Ան՝ իր կեանքի վերջալոյսին, ցկեանս նախագահի կոչումին արժանացած էր այս վերջին մշակութային սրահի «Ընդհանուր ժողով»-ի որոշումով: Այսօր՝ «Կոկաեան Սրահ»-ի լսարանը կը կրէ իր անունը:

Ալեքսանդր Սարուխան, անդարձ կը մեկնէր այս աշխարհէն, 1977 թ. Յունուար 1-ին, աւելի քան հինգ տասնամեակներ, իր ժպիտին հետ՝ ազնիւ ու վսեմ գաղափարներ բաշխելէ ետք համայն մարդկութեան:

ԵԴՈՒԱՐԴ ՅԱԿՈԲԵԱՆ

ԾԱՆՕԹ.- Սարուխան իր ողջ կեանքի ընթացքին ստեղծագործած է աւելի քան 40.000 երգիծանկարներ, որոնց մեծագոյն մասը թաղուած կը մնայ եգիպտական մամուլի դժուարամատչելի հաւաքածոներուն մէջ: Այդ արտակարգօրէն բազմազան երգիծանկարներէն յատկապէս քաղաքականները՝ որոնք կը կազմեն անոր ստեղծագործութեան ստուարագոյն եւ լաւագոյն մասը, ապրած են այնքան ժամանակ՝ որքան տեւած է անոնց տուն տուող այժմէականութիւնը:

Ներկայ «Ալպոմ»-ի երգիծանկարներուն ընտրութեան համար, հաւաքողը՝ առաւելաբար օգտագործած է իր տրամադրութեան տակ գտնուող բնօրինակները. որով՝ Սարուխանի արուեստը կարելի եղաւ ներկայացնել միայն քանի մը բնորոշիչ երգիծանկարներով:

Ե. Յ.

نسخ

REPRODUCTIONS

ՎԵՐԱՏՊՈՒԹԻՒՆՆԵՐ

جمـــع ونشـــر

سـيرفارت صـاروخـان

القاهرة ١٩٨٥

CARICATURES ASSEMBLÉES ET ÉDITÉES

par

Sirvart Saroukhan

Le Caire, 1985

CARICATURES COLLECTED AND EDITED

by

Sirvart Saroukhan

Cairo, 1985

ԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀԱՒԱՔԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԵՑ

Սիրվարդ Սարուխան

Գահիրէ, 1985

I

بورتريهات

PORTRAITS-CHARGES

ԵՐԳԻԾԱԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

محمد نجيـــب

(١٩٠١ - ١٩٨٤)

أول رئيس لجمهـورية مصـــر

Mohamed Naguib

(1901 - 1984)

Le premier président de la République d'Égypte

Mohamed Naguib

(1901 - 1984)

The first president of the Republic of Egypt

Մուհամէտ Նակիպ

(1901 - 1984)

Առաջին նախագահը Եգիպտոսի Հանրապետութեան



خـليل مطـران

شاعر القطرين

(لبنان ــ مصر)

Khalil Moutran

Poète

(Liban / Egypte)

Khalil Moutran

Poet

(Lebanon / Egypt)

Խալիլ Մութրան

Բանաստեղծ

(Լիբանան / Եգիպտոս)

عباس محمود العقاد
أديـــب
(ج.م.ع.)

Abbas Mahmoud el Akkad
Écrivain
(R.A.d'Égypte)

Abbas Mahmoud el Akkad
Writer
(A.R. of Egypt)

Ապպաս Մահմուտ էլ Աքքատ
Արձակագիր
(Եգիպտոս)



أرميناج شاه مراديان
مغن أرمنى

Arménag Chahmouradian
Ténor arménien

Armenag Shahmouradian
Armenian tenor

Արմենակ Շահմուրատեան
Երգիչ



يرفانت أوديان
كاتب ساخر أرمنى

Yervant Odian
Ecrivain satirique arménien

Yervant Odian
Armenian satirist writer

Երուանդ Օտեան
Երգիծագիր

ميكائيل جورجيان
كاتب أرمنى
(ج . م . ع .)

Michael Gurdjian
Ecrivain arménien
(R.A. d'Égypte)

Michael Gurdjian
Armenian writer
(A.R. of Egypt)

Միքայէլ Կիւրճեան
Արձակագիր
(Եգիպտոս)



فاهان تيكييان
شاعر أرمنى
(ج . م . ع .)

Vahan Tékéyan
Poète arménien
(R.A. d'Égypte)

Vahan Tekeyan
Armenian poet
(A.R. of Egypt)

Վահան Թէքէան
Բանաստեղծ
(Եգիպտոս)



مارتيروس ساريان
رسام أرمنى
(جمهورية أرمينيا السوفيتية)

Martiros Sarian
Peintre arménien
(R.S.S. d'Arménie)

Martiros Sarian
Armenian painter
(S.S.R. of Armenia)

Մարտիրոս Սարեան
Նկարիչ
(Ս. Հայաստան)

أرام خاتشاتوريان
موسيقار أرمنى
(جمهورية أرمينيا السوفيتية)

Aram Khatchatourian
Compositeur arménien
(R.S.S. d'Arménie)

Aram Khatchatourian
Armenian composer
(S.S.R. of Armenia)

Արամ Խաչատրեան
Կոմպոզիտոր
(Ս. Հայաստան)

أرا سركيسيان
مثال أرمنى
(جمهورية أرمينيا السوفيتية)

Ara Sarkissian
Sculpteur arménien
(R.S.S. d'Arménie)

Ara Sarkissian
Armenian sculptor
(S.S.R. of Armenia)

Արա Սարգսեան
Քանդակագործ
(Ս. Հայաստան)

فيكتور هامبارتسوميان
عالم فضاء أرمنى
(جمهورية أرمينيا السوفيتية)

Victor Hampartsoumian
Astrophysicien arménien
(R.S.S. d'Arménie)

Victor Hampartsoumian
Armenian astrophysicist
(S.S.R. of Armenia)

Վիկտոր Համբարձումեան
Աստրոֆիզիկոս
(Ս. Հայաստան)

استبان زوريان
أديب أرمنى
(جمهورية أرمينيا السوفيتية)

Stepan Zorian
Romancier arménien
(R.S.S. d'Arménie)

Stepan Zorian
Armenian novelist
(S.S.R. of Armenia)

Ստեփան Զօրեան
Արձակագիր
(Ս. Հայաստան)

نایری زاریان
شاعر أرمنی
(جمهورية أرمينيا السوفيتية)

Nairi Zarian
Romancier, poète et dramaturge arménien
(R.S.S. d'Arménie)

Nairi Zarian
Armenian novelist, poet and dramatist
(S.S.R. of Armenia)

Նայիրի Զարեան
Արձակագիր, բանաստեղծ եւ թատերագիր
(Ս. Հայաստան)

أرسين شابانيان
رسام وحفار أرمنى
(فرنسا)

Arsène Chabanian
Peintre et graveur arménien
(France)

Arsen Shabanian
Armenian painter and engraver
(France)

Արսէն Շապանեան
Նկարիչ եւ փորագրիչ
(Ֆրանսա)



كارزو
رسام أرمنى
(فرنسا)

Carzou
Peintre arménien
(France)

Carzou
Armenian painter
(France)

Գառզու
Նկարիչ
(Ֆրանսա)

اليكس مانوكيان
رئيس مجلس ادارة الاتحاد الخيرى الأرمنى العام
(الولايات المتحدة الامريكية)

Alex Manoukian
Mécène arménien
Président à vie de l'Union Générale
Arménienne de Bienfaisance
(É.-U. d'Amérique)

Alex Manoogian
Armenian benefactor
President for life of the Armenian
General Benevolent Union
(U.S.A.)

Ալեք Մանուկեան
Մեկենաս
Ցկեանս Նախագահ Հ.Բ.Ը.Մ.-ի
(Ա.Մ.Ն.)

تشيك داماديان
رسام كاريكاتورى أرمنى
(جمهورية رومانيا الشعبية)

Čik Damadian
Caricaturiste arménien
(R.P. de Roumanie)

Čik Damadian
Armenian caricaturist
(P.R. of Rumania)

Չիկ Տամատեան
Երգիծանկարիչ
(Ռումանական Ժ.Հ.)

زابيل بوياجيان
رسامة وكاتبة أرمنية
(المملكة المتحدة)

Zabelle Boyadjian
Peintre et écrivain arménien
(Angleterre)

Zabel Boyadjian
Armenian painter and writer
(England)

Զապէլ Պոյաճեան
Նկարչուհի եւ գրող
(Անգլիա)

وليام سارويان
مؤلف روائى ومسرحى من أصل أرمنى
(الولايات المتحدة الامريكية)

William Saroyan
Écrivain et dramaturge américain d'origine arménienne
(É.-U. d'Amérique)

William Saroyan
American novelist and playwright of armenian birth
(U.S.A.)

Վիլեամ Սարոյեան
Գրող եւ թատերագիր
(Ա.Մ.Ն.)

روبين ماموليان
مخرج سينمائى ومسرحى أرمنى
(الولايات المتحدة الامريكية)

Roubène Mamoulian
Metteur en scène de théâtre et de cinéma arménien
(É.-U. d'Amérique)

Rouben Mamoulian
Armenian movie and theater director
(U.S.A.)

Ռուբէն Մամուլեան
Շարժանկարի եւ թատրոնի բեմադրիչ
(Ա.Մ.Ն.)



أرباج مخيتاريان
عالم المصريات الأرمنى
(بلجيكا)

Arpag Mekhitarian
Égyptologue arménien
(Belgique)

Arpag Mekhitarian
Armenian Egyptologist
(Belgium)

Արբակ Մխիթարեան
Եգիպտաբան
(Պելճիքա)

الدكتور ثروت عكاشة
وزير الثقافة المصرى الأسبق

Dr. Sarwat Okacha
Homme d'état égyptien
(Ancien Ministre de la Culture)

Dr. Sarwat Okasha
Egyptian statesman
(Former Minister of culture)

Տքր. Սարուաթ Օքաշա
Եգիպտոսի Մշակոյթի նախկին նախարար

أونيج أفيدسيان
رسام ومثال أرمنى
(ج . م . ع .)

Onnig Avédissian
Peintre et sculpteur arménien
(R.A. d'Égypte)

Onnig Avedissian
Armenian painter and sculptor
(A.R. of Egypt)

Օննիկ Աւետիսեան
Նկարիչ եւ քանդակագործ
(Եգիպտոս)

دين أتشيسون
رجل سياسى امريكى

Dean Acheson
Homme d'état américain

Dean Acheson
American statesman

Տին Աչիսըն
Ամերիկացի դիւանագէտ

أنطونى إيدن
رجل سياسى انجليزى

Anthony Eden
Homme d'état anglais

Anthony Eden
English statesman

Անթոնի Իդըն
Անգլիացի դիւանագէտ



THE GRAND-DAUGHTERS OF SAROUKHAN

(Sylva and Sossy)

حفيـــــــدتى الرســـــام

(ســـيلفا وســوســى)

LES PETITES-FILLES DE SAROUKHAN

(Sylva et Sossie)

Ա. ՍԱՐՈՒԽԱՆԻ ԹՈՌՆՈՒՀԻՆԵՐԸ

(Սիլվա եւ Սօսի)

جرابت (جارو) ناردیان
مراجع حسابات
(ج.م.ع.)

Garo Neredian
Censeur
(R.A. d'Égypte)

Garo Neredian
Auditor
(A.R. of Egypt)

Կարօ Ներետեան
Հաշուեքննիչ
(Եգիպտոս)

هاجوب هاجوبيان
رسام أرمنى
(جمهورية أرمينيا السوفيتية)

Hagop Hagopian
Peintre arménien
(R.S.S. d'Arménie)

Hagop Hagopian
Armenian painter
(S.S.R. of Armenia)

Յակոբ Յակոբեան
Նկարիչ
(Ս. Հայաստան)

أرام البان
مصور فنى فوتوغرافى
(ج . م . ع .)

Aram Alban
Maître photographe arménien
(R.A. d'Égypte)

Aram Alban
Armenian master photographer
(A.R. of Egypt)

Արամ Ալպան
Արուեստագէտ լուսանկարիչ
(Եգիպտոս)

أرسين يرجات
شاعر أرمنى
(ج . م . ع .)

Arsène Yergat
Poète arménien
(R.A. d'Égypte)

Arsen Yergat
Armenian poet
(A.R. of Egypt)

Արսէն Երկաթ
Բանաստեղծ
(Եգիպտոս)

أشود زوريان
رسام أرمنى
(ج · م · ع ·)

Achod Zorian
Peintre arménien
(R.A. d'Égypte)

Ashod Zorian
Armenian painter
(A.R. of Egypt)

Աշոտ Զօրեան
Նկարիչ
(Եգիպտոս)

الكسندر هاروتونيان
موسيقار أرمنى
(جمهورية أرمينيا السوفيتية)

Alexandre Haroutunian
Compositeur arménien
(R.S.S. d'Arménie)

Alexander Haroutunian
Armenian composer
(S.S.R. of Armenia)

Ալեքսանդր Յարութիւնեան
Կոմպոզիտոր
(Ս. Հայաստան)

ادوارد هاجوبيان

موسيقار أرمنى

(ج . م . ع .)

Edouard Hagopian
Compositeur et dirigeur arménien
(R.A. d'Égypte)

Edward Hagopian
Armenian composer and conductor
(A.R. of Egypt)

Եդուարդ Յակոբեան
Կոմպոզիտոր եւ խմբավար
(Եգիպտոս)

II

حيـــــاة سياســـــية

VIE POLITIQUE

POLITICAL LIFE

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔ

الاستاذ محمد التابعى ، «المصرى أفندى» وصاروخان

بمناسبة تأسيس مجلة «آخر ساعة» المصورة بالقاهرة فى عام ١٩٣٤

Mohamed el Tabei, «Masri Effendi» et Saroukhan

À l'occasion de la fondation de la revue arabe «Akher Saa» au Caire en 1934

Mohamed el Tabei, «Masri Effendi» and Saroukhan

On the occasion of the establishment of the arabic magazine «Akher Saa» in Cairo, in 1934

Մուհամէտ էլ Թապի, «Մասրի Էֆֆէնտի» եւ Սարուխան

«Ախըր Սաա» արաբական շաբաթերթի հիմնադրութեան առիթով (Գահիրէ, 1934 թ.)

آخر ساعة
المصورة

تشكيل وزارى مصرى بالزى الفرعونى فى فترة من الفترات

(١) أحمد حمزة خوفو وزير الزراعة ، والبائع المتجول سليمان غنام منقرع وزير التجارة ، وخلفهما لوحة عدالة عبد الفتاح الطويل باشا وزير العدل (٢) حامل السماعة عبد اللطيف محمود بك وزير الصحة يفحص أبو الهول محمد صلاح الدين بك وزير الخارجية – وخلفهما عثمان محرم باشا وزير الاشغال وأحمد حسين بك وزير الشئون والعسكرى فؤاد سراج الدين باشا «رع رع» (٣) حارس المال زكى عبد المتعال بك وزير المالية – والكاتب المصرى الدكتور طه حسين وزير المعارف . (٤) حامل الميزان محمد الوكيل بك وزير الاقتصاد – والببغاء الصامت زكى العرابى باشا وزير المواصلات – والعسكرى مصطفى نصرت بك وزير الحربية . (٥) المومياء يس أحمد باشا وزير الاوقاف وبجانبه الاستاذ ابراهيم فرج وزير الشئون البلدية – وخلفهما النحاس باشا تحتمس وبجانبه مساعده تحتمس الثانى الدكتور حامد زكى وزير الدولة وعلى اللوحة مرسى فرحات بك وزير التموين .

FORMATION D'UN CABINET ÉGYPTIEN EN COSTUMES PHARAONIQUES

(À une certaine période)

FORMATION OF AN EGYPTIAN CABINET IN PHARAONIC COSTUMES

(During a certain period)

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ՓԱՐԱՒՈՆԵԱՆ ՏԱՐԱԶՆԵՐՈՎ

(Էր երբեմն)

(١) (٢) (٣) (٤) (٥)

جامعة الدول العربية فى فترة من الفترات

(١) المفتى الحاج أمين الحسينى والذى يعدو حميد فرنجيه وزير خارجية لبنان السابق إذ يرفض الاشتراك فى وزارة لبنان (٢) الممسك بذيل الجمل نورى السعيد باشا رئيس وزراء العراق والممسك بساق الجمل فوزى الملقى باشا ويشده توفيق أبو الهدى باشا رئيس وزراء شرق الاردن (٣) الامير السنوسى (ليبيا) (٤) سيف الاسلام عبد الله (اليمن) (٥) راكب الجمل عزام باشا ووراءه رياض الصلح بك رئيس وزراء لبنان (٦) ممسك النفير سامى الحناوى (سوريا) وحامل الطبلة هاشم الاتاسى (سوريا) (٧) ممسكو مقود الجمل : الشيخ يوسف ياسين (الحجاز) وسرى باشا ومحمد هاشم (مصر)

LA «LIGUE ARABE» (À une certaine période)

THE «ARAB LEAGUE» (During a certain period)

«ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱ»Ն (Էր երբեմն)

(١) (٢) (٣) (٤) (٥) (٦) (٧)

الرئيس جمال عبد الناصر لشعب مصر : «للتقدم والازدهار يجب ان تكون الكفتان متساويتان»

LE PRÉSIDENT GAMAL ABDEL NASSER AU PEUPLE ÉGYPTIEN: «Pour la prospérité et le progrès de notre pays, gardez la balance entre la population et la production».

THE PRESIDENT GAMAL ABDEL NASSER TO THE EGYPTIAN PEOPLE: «For the prosperity and progress of our country, the population should not exceed production».

ՆԱԽԱԳԱՀ ԿԱՄԱԼ ԱՊՏԷԼ ՆԱՍԷՐ՝ ԵԳԻՊՏԱՑԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ.- «Մեր երկրի բարգաւաճումին եւ յառաջդիմութեան համար, ժողովուրդին աճը պէտք չէ գերազանցէ արտադրութիւնը»:



الرئيس محمد أنور السادات الى «عرب أفندى» : «الدستور القديم يحتاج الى بعض التعديلات ...»

LE PRÉSIDENT MOHAMED ANWAR EL SADAAT À «ARABE EFFENDI»: «L'ancienne Constitution a besoin de quelque repassage ...»

THE PRESIDENT MOHAMED ANWAR EL SADAAT TO «ARAB EFFENDI»: «The old Constitution needs some ironing...».

ՆԱԽԱԳԱՀ ՄՈՒՀԱՄԷՏ ԱՆՈՒԱՐ ԷԼ ՍԱՏԱԹ՝ «ԱՐԱԲ ԷՖՖԷՆՏԻ»-ին.- «Անհրաժեշտ է նախկին Սահմանադրութիւնը քիչ մը արդուկել...»:



AFRICA LIBERATION DAY

يوم تحرير أفريقيا

ԱՓՐԻԿԷԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐ

JOURNÉE DE LA LIBÉRATION DE L'AFRIQUE



تقسيم قبرص ... حسب شهية تركيا (١٩٦٤)

LE PARTAGE DE CHYPRE ... POUR SATISFAIRE L'APPÉTIT DE LA TURQUIE (1964)

THE PARTITION OF CYPRUS ... TO SATISFY THE APPETITE OF TURKEY (1964)

ԿԻՊՐՈՍԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ՝... ԸՍՏ ԹՈՒՐՔԻՈՅ ԱԽՈՐԺԱԿԻՆ (1964)

حلـم أمـــة

«متى تتحقق هذه الرقصة ؟ ...»

LE RÊVE D'UNE NATION

«À quand cette ronde ? ...»

THE DREAM OF A NATION

«When will this dance come true ? ...»

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԶ

«Ե՞րբ այս շուրջպարը...»

III

« هذه الحرب » (١٩٣٩-١٩٤٥)

لوحـــات مختـــارة

«CETTE GUERRE» (1939-1945)

CARICATURES CHOISIES

«THIS WAR» (1939-1945)

SELECTED CARTOONS

«ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ» (1939-1945)

ԸՆՏՐԱՆԻ ԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐ

هتلر لجوتيه : ألم تقل يا أستاذى .. «نور فأكثر نورا ؟»

HITLER À GOETHE: «Maître n'as-tu pas dit... «Lumière, plus de lumière»?

HITLER TO GOETHE: «Master, haven't you said ... «Light, more light»?

ՀԻԹԼԷՐ՝ ԿԷՕԹԷԻ.- «Վարպետ, միթէ չըսի՞ր... «Լոյս, աւելի լոյս»:



HITLER: «J'entrerai à Stalingrad ...».

STALINE: «Vas-y mon vieux, vas-y toujours...».

ՀԻԹԼԷՐ.- «Պիտի մտնեմ Սթալինկրատ...»:

ՍԹԱԼԻՆ.- «Հրամմէ մարդուկս, հրամմէ...»:

HITLER: «I'll enter Stalingrad ...»

STALIN: «Go ahead old chap ...»

هتلر : «سوف أدخل ستالينجراد !»

ستالين : «تفضل يا صديقى تفضل»



بين نارين (تشرشل ، هتلر وستالين)

ENTRE DEUX FEUX (Churchill, Hitler et Staline)

BETWEEN TWO FIRES (Churchill, Hitler and Stalin)

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԻՋԵՒ (Չըրչիլ, Հիթլէր եւ Սթալին)



هتلر دخل كماشة ستالين ...

HITLER DANS LES PINCES DE STALINE ...

HITLER IN STALIN'S PINCERS ...

ՀԻԹԼԷՐ՝ ՍԹԱԼԻՆԻ ԱՔՑԱՆԻՆ ՄԷՋ...

«هارا كيرى» (السلاح السرى الأخير)

«HARAKIRI» (La dernière arme secrète ...)

«HARAKIRI» (The last secret weapon ...)

«ՀԱՐԱՔԻՐԻ» (Գաղտնի վերջին զէնքը...)

السلام ، الحرب والثلاثة الكبار (ستالين ، تشرشل وترومان)

السلام : « كما تمكنتم من القضاء عليه ، ستستطيعون بالتالى علاجى سويا » .

LA PAIX, LA GUERRE ET LES «TROIS GRANDS» (CHURCHILL, STALINE ET TRUMAN)

LA PAIX: «Ensemble vous l'avez assomé, ensemble vous arriverez à me guerrir».

THE PEACE, THE WAR AND THE «THREE GREATS» (CHURCHILL, STALIN & TRUMAN)

THE PEACE: «Together you settled him, and together you'll manage to cure me».

ՊԱՏԵՐԱԶՄԸ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ «ԵՐԵՔ ՄԵԾԵՐԸ»՝ ՍԹԱԼԻՆ, ՉԸՐՉԻԼ ԵՒ ԹՐՈՒՄԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ.- «Միասին զայն զգետնեցիք, միասին պիտի կրնաք զիս բուժել»:

Saroyan 64

IV

فنـــــون جميلـــــة

BEAUX-ARTS

FINE ARTS

ԳԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐ

صاروخان بريشة رسامين ...

Saroukhan vu par ...

Saroukhan as seen by ...

Սարուխան դիտուած...



Vu par CEZANNE



Vu par MODIGLIANI

Vu par REMBRANDT

Vu par DEGAS

Vu par PICASSO



Vu par Meissonnier

Vu par EL GRECO

Vu par CARZOU



Vu par GAUGUIN



Vu par VAN GOGH

Vu par MAHMOUD SAÏD

Vu par RENOIR



Vu par AVEDISSIAN

Vu par ROUAULT

الرسام التجريدى : «ماذا أعنى بهذه الرسومات ؟ ... ان النقاد سيشرحونها لى غدا فى الصحف»

LE PEINTRE ABSTRAIT: «Ce que je veux dire par mes œuvres? ... Les critiques d'art me le diront dans la presse ...».

THE ABSTRACT PAINTER: «What do my paintings mean?... Tomorrow I shall find out in the press ...».

ՎԵՐԱՑԱԿԱՆ ՆԿԱՐԻՉԸ.- «Ի՞նչ ըսել կ'ուզեմ նկարներովս..., վաղը՝ այդ մասին, արուեստի քննադատները կը լուսաբանեն՝... մամուլով»:

بدون تعليق

SANS PAROLES

NO COMMENT

ԱՌԱՆՑ ԽՕՍՔԻ



MOMENT PATHÉTIQUE

«Ca y est? ... J'attaque?»

ՍՐՏԱՇԱՐԺ ՐՈՊԷ

«Պատրա՞ստ ես..., սկսի՞մ...»:

PATHETIC MOMENT

«All right? ... Shall I start?»

اللحظة الحساسة

« ... ؟ هل أبدأ »

الرسام التجريدى : «لكن ... هذا ورق حائط ... أما رسوماتى فانها فى الداخل !»

LE PEINTRE ABSTRAIT: «Mais ... mes tableaux sont à l'intérieur ... ici ce sont les papiers-peints!»

THE ABSTRACT PAINTER: «But ... my paintings are inside there ... those are the wall-papers!»

ՎԵՐԱՑԱԿԱՆ ՆԿԱՐԻՉԸ.- «Բայց... նկարներս ներսը ցուցադրուած են..., ասոնք՝ պատի թուղթեր են...»:

V

حيـــــاة اجتمـــــاعية

VIE SOCIALE

SOCIAL LIFE

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔ

ثلاثة رءوس ... ثلاثة آفاق

TROIS TÊTES ... TROIS MONDES

THREE HEADS ... THREE WORLDS

ԵՐԵՔ ԳԼՈՒԽ... ԵՐԵՔ ԱՇԽԱՐՀ

نظرة الأم ...

L'OEIL DE LA MÈRE ...

THE MOTHER'S EYE ...

ՄՕՐՔ ԱՉՔԸ...



برنامج الكبار

PROGRAMME POUR ADULTES

ADULTS' PROGRAM

ՄԵԾԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

برنامج الأطفال

PROGRAMME POUR ENFANTS

CHILDREN'S PROGRAM

ՓՈՔՐԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

الخطيب الممل ...

L'ORATEUR ENNUYANT ...

THE BORING SPEAKER ...

ՁԱՆՁՐԱՑՈՒՑԻՉ ՃԱՌԱԽՕՍԸ...

رقصة التحطيب

LA DANSE POPULAIRE ÉGYPTIENNE «TAHTIB» **THE EGYPTIAN FOLK DANCE «TAHTIB»**

«ԹԱՀԹԻՊ» (Եգիպտական ժողովրդական պար)

شرح كيفية اعداد المأكولات ... بعد الاستقبال

LA RECETTE ... APRÈS LA RÉCEPTION

THE RECIPE ... AFTER THE RECEPTION

ՀԱՄԱԴԱՄՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

هى : «فيكتووَر ... أين أنت»

ELLE: «Victor ... où es-tu?»

SHE: «Victor ... where are you?»

ԿԻՆԸ.- «Վիկտո՛ր... ո՞ւր ես...»:

«أخيرا بمفردنا ...»

«ENFIN SEULS ...»

«AT LAST ALONE ...»

«ՎԵՐՋԱՊԷՍ ԱՌԱՆՁԻ՜Ն...»:

«أخيرا بمفردى ...»

«ENFIN SEUL...»

«ALONE AT LAST ...»

«ԱՌԱՆՁԻՆ ՎԵՐՋԱՊԷ՜Ս...»:

بدون تعليق

SANS PAROLES **NO COMMENT**

ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

موكب حفل العرس (صاروخان فى عقد قران كريمته سيتا مع جارو ناردیان)

UNE PROCESSION NUPTIALE (Saroukhan au mariage de sa fille Seta avec Garo Neredian)

A WEDDING PROCESSION (Saroukhan at the wedding of his daughter Seta with Garo Neredian)

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԹԱՓՕՐ (Սարուխան՝ իր աղջկան Սեդայի եւ Կարօ Ներետեանի պսակադրութեան)

VI

رســـــــوم

ILLUSTRATIONS

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐ

«Ընկ. Փանջունի»

(Ե. Օտեան)



«CAMARADE PANTCHOUNI»
(Y. Odian)

«COMRADE PANTCHOUNI»
(Y. Odian)

... եւ ամենախիստ հարցաքննութեան ենթարկեցին գերիները:

Ընկեր Սարսափունի անմիջապէս բարձրացաւ
վարժուհիի սահմանուած բեմը...

Չպէտք է թոյլ տալ որ հայ չէզոք կամ ո՛չ
յեղափոխական տարրը, փորձէ գլուխ բարձրացնել...

«المتسولون الشرفاء»

(هـ. بارونيان)



«HONORABLES MENDIANTS»
(H. Baronian)

«HONORABLE BEGGARS»
(H. Baronian)

(Անտիպ)

Տիկին Շուշանը, Աբիսողոմ աղան, Տէր պապան եւ Մանուկ աղան:

- Լսուած բա՞ն է ձեզի պէս երեւելի մարդ մը Պոլիս գայ եւ պատկերը քաշել չտայ...

- Երեսին խօսիլ չըլլայ, ընտիր մարդ մ'է:
- Պատուական մարդ է:
- Վրան նայիս նէ, կ'ըսես, որ քիպարութիւնը վրայէն կը վազէ կոր:

«نحن من خلال نظارتنا»

«NOUS, À TRAVERS NOTRE OPTIQUE»

«WE, THROUGH OUR GLASSES»

ՄԵՆՔ ԱՂԱՆԵՐԸ.-

«Դպրոցը բաց ունի: Իբր կրթական մշակ՝ զոհողութիւն պէտք է ընէք մշակոյթի այս օճախը կանգուն պահելու համար: Մենք, մեր կողմէ որոշեցինք տարեկան հինգական ոսկի տալ դպրոցին: Ձերին ալ ամսականներէն հինգական ոսկի պիտի կտրենք. եղա՞ւ»:

- Ըսելիքս շատ գաղտնի է, կրնա՞ք տղաքը հեռացնել:
- Խօսեցէ՛ք, մի վախնաք: Մեր տղաքը հայերէն չեն գիտեր: Սակայն նայնիսկ տան մէջ չէք գտնուիր, վերջապէս:

- Քեզ լաւ նկարիչ կը կարծէի, բայց այսօր միտքս փոխեցի: Բարեկամս գործերուդ չհաւնեցաւ:
- Բարեկամդ նկարի՞չ է:
- Ո՛չ, որմնադիր է: Բայց անգլիացի է վերջապէս: Դուն անգլիացիէ մը աւելի աղէ՞կ կը հասկնաս...



«الأمثلة الارمنية»

«LES LOCUTIONS ARMENIENNES»

«THE ARMENIAN IDIOMS»

Լրագրին վրայ աչք մը պտտցուցի

Հարսը կեսուրը Չեմ-ի վրա՞յ կը պտտցընէ կոր

Գլուխս կ'արդուկէ կոր

قائمـــــــــة نســـــــــخ

صاروخان بريشته ..... ٥، ٨، ١٨، ٢٤، ٦٢، ٧٦، ٨٤، ٩٢، ١٠٤، ١١٤

١ – بورتريهـــات :

محمد نجيب ٢٨
خليل مطران ٣٠
عباس محمود العقاد ٣١
ارميناج شاه مراديان ٣٢
يرفانت أديان ٣٣
ميكائيل جورجيان ٣٤
فاهان تيكيان ٣٥
مارتيروس ساريان ٣٦
أرام خاشتاتوريان ٣٧
أرا سركيسيان ٣٨
فيكتور هامبارتسوميان ٣٩
استبان ذوريان ٤٠
نايرى ذاريان ٤١
ارسين شابانيان ٤٢
كارزو ٤٣
اليكس مانوكيان ٤٤
تشيك داماديان ٤٥
زابيل بوياجيان ٤٦
وليام سارويان ٤٧
روبين ماموليان ٤٨
ارباج مختياريان ٤٩
الدكتور ثروت عكاشة ٥٠
أونيج أفيدسيان ٥١
دين أتشيسون ٥٢
انطونى إيدن ٥٣
سيلفا وسوسى ٥٤
جرابت (جارو) ناردیان ٥٥
هاجوب هاجوبيان ٥٦
أرام البان ٥٧
ارسين يرجات ٥٨
اشود زوريان ٥٩
الكسندر هاروتونيان ٦٠
ادوارد هاجوبيان ٦١

٢ – حيـــاة سياسية ..... ٦٣ – ٧٦

٣ – «هـذه الحـرب» ..... ٧٧ – ٨٣

٤ – فنـــون جميـــلة ..... ٨٥ – ٩١

٥ – حيـــاة اجتماعيـة ..... ٩٣ – ١٠٣

٦ – رســـوم

«الرفيـــق بانشـونى» ١٠٦
«المتسـولون الشـرفاء» ١٠٨
«نحـن من خلال نظارتنا» ١١٠
«الأمثـلة الأرمنيـة» ١١٢

LISTE DES REPRODUCTIONS

Autoportrait (1) 5

Autoportrait (2) 8

Autoportrait (3) 18

Autoportrait (4) 24

I- PORTRAITS-CHARGES

Mohamed Naguib 29

Khalil Moutran 30

Abbas Mahmoud el Akkad 31

Arménag Chahmouradian 32

Yervant Odian 33

Michael Gurdjian 34

Vahan Tékéyan 35

Martiros Sarian 36

Aram Khatchatourian 37

Ara Sarkissian 38

Victor Hampartsoumian 39

Stepan Zorian 40

Naïri Zarian 41

Arsène Chabanian 42

Carzou 43

Alex Manoukian 44

Čik Damadian 45

Zabelle Boyadjian 46

William Saroyan 47

Roubène Mamoulian 48

Arpag Mekhitarian 49

Dr. Sarwat Okacha 50

Onnig Avédissian 51

Dean Acheson 52

Anthony Eden 53

Sylva et Sossie 54

Garo Neredian 55

Hagop Hagopian 56

Aram Alban 57

Arsène Yergat 58

Achod Zorian 59

Alexandre Haroutiunian 60

Edouard Hagopian 61

Autoportrait (5) 62

II- VIE POLITIQUE 63-75

Autoportrait (6) 76

III- «CETTE GUERRE» 77-83

Autoportrait (7) 84

IV- BEAUX-ARTS 85-91

Autoportrait (8) 92

V- VIE SOCIALE 93-103

Autoportrait (9) 104

VI- ILLUSTRATIONS

«CAMARADE PANTCHOUNI» 106

«HONORABLES MENDIANTS» 108

«NOUS, À TRAVERS NOTRE OPTIQUE» 110

«LES LOCUTIONS ARMÉNIENNES» 112

Autoportrait (10) 114

LIST OF REPRODUCTIONS

Self-portrait (1) 5
Self-portrait (2) 8
Self-portrait (3) 18
Self-portrait (4) 24

I- PORTRAITS-CHARGES

Mohamed Naguib 29
Khalil Moutran 30
Abbas Mahmoud el Akkad 31
Armenag Shahmouradian 32
Yervant Odian 33
Michael Gurdjian 34
Vahan Tekeyan 35
Martiros Sarian 36
Aram Khatchatourian 37
Ara Sarkissian 38
Victor Hampartsoumian 39
Stepan Zorian 40
Naïri Zarian 41
Arsen Shabanian 42
Carzou 43
Alex Manoogian 44
Čik Damadian 45
Zabel Boyadjian 46
William Saroyan 47
Rouben Mamoulian 48
Arpag Mekhitarian 49
Dr. Sarwat Okacha 50
Onnig Avedissian 51
Dean Acheson 52
Anthony Eden 53
Sylva et Sossy 54
Garo Neredian 55
Hagop Hagopian 56
Aram Alban 57
Arsen Yergat 58
Ashod Zorian 59
Alexander Haroutiunian 60
Edward Hagopian 61

Self-portrait (5) 62

II- POLITICAL LIFE 63-75

Self-portrait (6) 76

III- «THIS WAR» 77-83

Self-portrait (7) 84

IV- FINE-ARTS 85-91

Self-portrait (8) 92

V- SOCIAL LIFE 93-103

Self-portrait (9) 104

VI- ILLUSTRATIONS

«COMRADE PANTCHOUNI» 106
«HONORABLE BEGGARS» 108
«WE, THROUGH OUR GLASSES» 110
«THE ARMENIAN IDIOMS» 112

Self-portrait (10) 114

ՅԱՆԿ ՎԵՐԱՏՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Ինքնադիմանկար (1) 5
Ինքնադիմանկար (2) 8
Ինքնադիմանկար (3) 18
ինքնադիմանկար (4) 24

1 - ԵՐԳԻԾԱԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ

Մուհամէտ Նակիպ 29
խալիլ Մութրան 30
Ապպաս Մահմուտ էլ Ակքատ 31
Արմենակ Շահմուրատեան 32
Երուանդ Օտեան 33
Միքայէլ Կիւրճեան 34
Վահան Թէքէեան 35
Մարտիրոս Սարեան 36
Արամ Խաչատրեան 37
Արա Սարգիսեան 38
Վիկտոր Համբարձումեան 39
Ստեփան Զօրեան 40
Նայիրի Զարեան 41
Արսէն Շապանեան 42
Գառզու 43
Ալեք Մանուկեան 44
Չիկ Տամատեան 45
Զապէլ Պօյաճեան 46
Վիլեամ Սարոյեան 47
Ռուբէն Մամուլեան 48
Արտակ Մխիթարեան 49
Տքր. Սարուաթ Օքաշա 50
Օննիկ Աւետիսեան 51
Տիգ Աշիսըն 52
Անթրնի Իտրն 53
Սիլվա եւ Սօսի 54
Կարօ Ներէտեան 55
Յակոբ Յակոբեան 56
Արամ Ալպան 57
Ալեքսանդր Յարութիւնեան 58
Եդուարդ Յակոբեան 59

ինքնադիմանկար (5) 62

2 - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔ ..... 63 - 75

ինքնադիմանկար (6) 76

3 - «ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ» ..... 77 - 83

ինքնադիմանկար (7) 84

4 - ԳԵՂԱՐՈՒԵՍՏՆԵՐ ..... 85 - 91

ինքնադիմանկար (8) 92

5 - ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵԱՆՔ ..... 93 - 103

ինքնադիմանկար (9) 104

6 - ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐ

«ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՋՈՒՆԻ» 106
«ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ» 108
«ՄԵՆՔ՝ ՄԵՐ ԱԿՆՈՑՈՎ» 110
«ՏԵ՛Ս ԽՕՍՔԵՐԴ» 112
ինքնադիմանկար (10) 114

ԽՕՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Ալ. Սարուխանի երգիծանկարչական տաղանդը բացայայտող այս գեղատիպ «Ալպոմ»-ին տպագրութեան աւարտին, խիղճի եւ սիրտի պարտք կը նկատեմ՝ այստեղ մի առ մի յիշատակել երախտիքը այն ազնուասիրտ անձերուն, որոնց համատեղ եւ համակամ գործակցութիւնը ամէն դրուատիքէ վեր է:

Իմացական, արուեստագիտական եւ թեքնիք ձեռնհասութեամբ, կոմպոզիտոր եւ խմբավար **Եդուարդ Յակոբեան** կատարեց «Ալպոմ»-ին խմբագրումի բարդ եւ գեղարուեստական ձեւաւորումի բծախնդիր աշխատանքները՝ իր բոլոր մանրամասնութիւններով, նաեւ պատրաստեց Ա. Սարուխանի կենսագրականը ֆրանսերէն եւ հայերէն լեզուներով:

Ներհուն անգլիագէտ տիկին **Լիւսի Մէլէմէթեան** կատարեց Սարուխանի կենսագրութեան թարգմանութիւնը. իսկ պրն. **Զաւէն Ճիզմէճեան** հմտօրէն կատարեց արաբերէնը՝ զոր վերանայելու ազնըւութիւնը ունեցաւ Մեթր **Կիրկիս Տոս:**

«Ալպոմ»-ին հայերէն բոլոր գրութիւնները խմբագրեց բանասէր պրն. **Տիգրան Գէորգեան:**

Վարձքը կատար Ալ. Սարուխանի արուեստը գնահատող եւ անոր յիշատակը յարգող իմ ազնիւ աջակիցներուս:

ՍԻՐՎԱՐԴ ՍԱՐՈՒԽԱՆ

Art editor: EDWARD HAGOPIAN

Wrapper photograph by Ara Avedissian

دار نوبار للطباعة

رقم ايداع ٨٥/٤٢٩١

Printed in the Arab Republic of Egypt

NUBAR PRINTING HOUSE

(Nubar & Hratch Simonian Bros.)

6A, Madrassat el Moallimin str.

Shoubra, Cairo

S. Saroukhan
4, Serapis st.
Heliopolis
A.R. of Egypt

دار نوبار للطباعة

ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ՆՈՒՊԱՐ

Nubar Printing House
Cairo - Egypt

ՍԱՐՈՒԽԱՆ SAROUKHAN صاروخان

Titel: ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒԽԱՆ Երգիծանկարիչ (1898-1977)

Autor: ՍԻՐՎԱՐԴ ՍԱՐՈՒԽԱՆ

Rechte: novak@treventus.com

Quelle: Kavaldjian-1987-Widmung.zip

CUSTOM

Titel: ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒԽԱՆ Երգիծանկարիչ (1898-1977)